



Թարգմանչաց Աւետարան  
1232 թ.

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ  
ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ Է

## ՍՈՒՐԲ ՄԵՍՈՐՈԴ

*Սիամանթօ*



Մեր ինքնութեան  
պահակները

ՕՇԱԿԱՆԻ վսեմական վարդապետ,  
Դուն վեհիմաստ վանական և Աստծոյ բաժակ,  
Դուն Յիսուսի բազմաբուրեան պատմուման,  
Խօսքի աղբիւր, բանի բարձունք,  
Կարողութեանց անվերջ կատար,  
Դուն իմաստի աւազան և աղօթքի կապոյտ անձրեւ  
Ափ մը հողէդ, ամբողջ երկինք մը դեռ կը բուրէ...

ՕՇԱԿԱՆԻ Դուն անկորուատ կրօնական,  
Անապատի մէ՛ջ միսրձուող ձգնաւոր,  
Դուն անբասիր և մեհեննական մենակեաց,  
Խունկի՝ անտօռ, կնդրուկներու բուրաստան,  
Քրիստոսի ազնիւ խօսքին դուն տիրական տարածիչ  
Եւ կրանիդեայ ուղղափառ սիւն,  
Եւ մորքի զմբէթ և հոգիի անծայրածիր հորիզոն,  
Դո՛ն շնորհի աշնանային շատրուան,  
Քու հաւատքէ՛դ հաւատացեալ՝ Ե՛ս ալ լացի...:

ՕՇԱԿԱՆԻ մէ՛ջ անմա՛հօրէն մահացեալ,  
Անձառելի և անդրանիկ դաստիարակ,  
Ես՝ երազային երախայ մը վեցամեայ,  
Այբբենարանդ ի ձեռին, անմեղօրէն զայն հեգելով  
Առաջին խաչը, ձակտէս սրտիս,  
Հաւատա՛ ինձ, ո՛վ հայրութիւն...  
Պատկերիդ դէմ է որ հաներ եմ...  
Եւ լսէ՛ այսօր, թոթովախոս ծաղկոցի,  
Շուշան մարմին մանուկներէն՝  
Մինչեւ ծերերն հողաբոյր,  
Քու Սուրբ անունդ կ'օրիներգեն...: